ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏՆ ՍՏԱՅԱՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Ռոբերտ Քոչարյանը:



Վեհարանի իր աշխատասենյակում պրն. Քոչարյանին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով պրն. Քոչարյանին նոր և խիստ պատասխանատու պաշտոն ստանձնելու առթիվ, վստահություն հայտնեց, որ այդ կոհողությունը ըստ արժանվույն կգնահատվի ողջ հայ ժողովրդի կողմից: Իր խոսքում Նորին Սրբությունը հատուկ շեշտեց, որ Եկեղեցին կորավիգ կլինի կառավարությանը ապգօգուտ բոլոր ձեռնարկները կյանքի կոչելու ճանապարհին, և կարևորեց Եկեղեցի-պետություն միասնական գործակցությունը:

Իր հայրապետական օրհնությունը տալով, Նորին Սրբությունն ավելացրեց, որ Ս. Զատկին նախորդող Ավագ շաբաթվա իր աղոթքներում միշտ ներկա կլինի վարչապետը:

Շնորհակալություն հայտնելով բարեմաղթանքների համար, պրն. Քոչարյանը շեշտեց, որ հայ ժողովրդի առաջ ունեցած մեծ պարտքի և պատասխանատվության զգացումով է ստանձնում վարչապետի պաշտոնը և նաև այն խորը համոզումով, որ Արցախի խաղաղության ու կայունության գլխավոր երաշխիքը ուժեղ Հայաստանի առկայությունն է:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ